

ՀՏԴ 711.1:504.75

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Ա.Ա. Ալոյան,
Յու.Ա. Մաֆարյան,
Ս.Ա. Թովմասյան,
Ջ.Ն. Մուրադյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՄԱԽՔԻ ԵՎ
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Արժարժվում են ՀՀ տարածքի էկոլոգիական հիմնականախիքի (անտառներ, անտառտնտեսության հողեր, հատուկ պահպանվող տարածքներ, ռեկրեացիոն տարածքներ և օբյեկտներ) պահպանության հիմնախնդիրները, որոնց սրությունը պայմանավորված է ոչ միայն բնական ռեսուրսների (հողային, ջրային, հումքային) չկառավարվող օգտագործման հետևանքով շրջակա միջավայրի աղտոտվածությամբ, այլև քաղաքայնացման գործընթացի ակտիվացմամբ և ՀՀ տարածքի չհավասարակշռված քաղաքաշինական-տնտեսական օգտագործմամբ: Այս տեսանկյունից էկոլոգիական հիմնականախիքի բարելավումը պետք է ընթանա քաղաքաշինական-տնտեսական զարգացման միջոցառումների հետ փոխկապակցված:

Առանցքային բառեր. էկոլոգիական հիմնականախիք, քաղաքաշինական հիմնականախիք, բնապահպանական միջոցառումներ, քաղաքայնացում, պոչամբար, քաղաքաշինական-տնտեսական յուրացվածություն

Հայաստանի Հանրապետությունում էկոլոգիական իրավիճակի սրությունը կապված է ոչ միայն բնական ռեսուրսների (հող, օդ, ջուր, օգտակար հանածոներ) չկառավարվող օգտագործման, արդյունաբերական թափոններով միջավայրի աճող աղտոտվածության, այլև քաղաքայնացման գործընթացի ակտիվացման և տարածքի ոչ հավասարակշռված օգտագործման հետ:

Բնակավայրային ցանցը, հիմնականում՝ քաղաքային բնակավայրերն իրենց արհեստական կառուցվածքներով, շրջակա միջավայրի վատթարացման և աղտոտման հիմնական աղբյուրն են: Այդ տեսանկյունից տարաբնակեցման համակարգի կատարելագործման միջոցառումներն ու բնօգտագործման օպտիմալացման գործընթացները խիստ փոխկապակցված են և պահանջում են առաջին հերթին հանրապետության մակարդակով համաէկոլոգիական միջոցառումների մշակում, ինչը հիմնականում հանգում է տարածքի ռացիոնալ գոտիավորմանը՝ տնտեսական բոլոր տիպի գործունեությունների կարգավորմամբ և տարածքի օգտագործման համապատասխան ռեժիմների սահմանմամբ: Համաձայն «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի» հիմնադրույթների՝ Հայաստանի տարածքում ըստ տնտեսական-քաղաքական յուրացվածության աստիճանի առանձնացվում են հետևյալ գոտիները.

ա. ինտենսիվ յուրացված,

բ. թույլ յուրացված,

գ. ռեկրեացիոն և լանդշաֆտի պահպանության, որը կազմում է ՀՀ տարածքի էկոլոգիական հիմնակմախքը՝ ընդգրկելով անտառները, անտառատնտեսության հողերը, բնապահպանական տարածքները (ազգային պարկեր, արգելոցներ, արգելավայրեր, բոլոր ռեկրեացիոն տարածքներն ու օբյեկտները), բուֆերային գոտիները (քաղաքային շրջակայքի պաշտպանիչ անտառներ, գետերի, աղբյուրների, ճանապարհների սանիտարապաշտպանիչ գոտիներ, բնության պահպանվող հուշարձաններ, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներ, ջրավազաններ և այլն):

Վերը նշված էկոլոգիական հիմնակմախքի տարրերը կազմում են ՀՀ տարածքի քաղաքաշինական-էկոլոգիական այն միջանցքը, որտեղ որոշակիորեն սահմանափակվում է տնտեսական-քաղաքաշինական գործունեությունը:

Էկոլոգիական հիմնակմախքի բարելավման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները [1].

- քաղաքաշինական-տնտեսական,
- ինժեներական,
- բնապահպանական:

1. Քաղաքաշինական-տնտեսական միջոցառումներ: Ներառում են քաղաքաշինական-տնտեսական տարբեր յուրացվածության գոտիներում տարածքի օգտագործման համապատասխան ռեժիմի կիրառում՝ էկոլոգիական հավասարակշռության պահպանման պայմանով.

ա. ինտենսիվ յուրացված գոտիներում, ուր ներառված է քաղաքների 86 %-ն ու քաղաքային բնակչության 98,7 %-ը, բնակչության խտությունը գերազանցում է էկոլոգիական շեմային խտությունը (200 մարդ/կմ²)՝ հասնելով 500 մարդ/կմ²-ի: Խիստ մեծ է մարդածին բեռնվածությունը. նախատեսվում է սահմանել տնտեսական-քաղաքաշինական գործունեության սահմանափակման ռեժիմ, որը ներառում է.

- բնակավայրերի տարածքային աճի սահմանափակում,
- գոյություն ունեցող արդյունաբերական օբյեկտներում առաջավոր տեխնոլոգիաների կիրառում,
- էկոլոգիապես անվտանգ գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպում,
- անտառների, բնապահպան տարածքների բարելավում,
- քաղաքների շուրջ կանաչ գոտիների ստեղծում,
- գետերի, ճանապարհների, արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության օբյեկտների սանիտարապաշտպանիչ գոտիների պահպանում,
- հումքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործում (հիմնականում հումքի տեղափոխմամբ և օգտագործմամբ թույլ յուրացված գոտիներում՝ միջհամայնքային, միջմարզային միավորումների ստեղծմամբ),

բ. թույլ յուրացված գոտիներում, որոնք օժտված են էկոլոգիական մեծ պոտենցիալով

(բնակչության խտությունը կազմում է 11... 35 մարդ/կմ²), տարաբնակեցման համակարգի հավասարակշռություն ստեղծելու համար նախատեսված է սահմանել քաղաքաշինական-տնտեսական գործունեության առաջնահերթ զարգացման ռեժիմ, որը ներառում է.

- բնակավայրերի տարածքային աճ՝ բնակավայրերի խոշորացման գործընթացները գույքորդելով բնական ռեսուրսների (հումքային, ջրային, հողային) արդյունավետ օգտագործմանը,
- արդյունաբերության բազային ճյուղերի զարգացում՝ հարուստ հանքահումքային ռեսուրսների օգտագործմամբ, համապատասխան ենթակառուցվածքների ստեղծմամբ, հումքի մշակման առաջավոր, միջազգային ստանդարտներին համապատասխանող տեխնոլոգիաների կիրառմամբ,
- գյուղատնտեսության ինտենսիվացում՝ ագրոտեխնիկական նորմերի պահպանմամբ,
- ճանապարհային, այդ թվում՝ տեղական նշանակության ցանցի զարգացում և կատարելագործում՝ ճանապարհային ցանցի մատչելիության շրջանակներում ընդգրկելով հումքային, ռեկրեացիոն, հողային ռեսուրսներ:

Թույլ յուրացված, այդ թվում՝ սահմանամերձ գոտիների հիմնախնդիրները բազմաբնույթ են, և դրանց լուծումները պետք է պայմանավորվեն տվյալ տարածաշրջանային առանձնահատկություններով, ինչպես նաև հանրապետության տարածքային զարգացման գերակայություններով:

Առաջնահերթ զարգացման ռեժիմի իրականացման արդյունավետությունը կարող է ապահովվել պետության և կառավարության կողմից ներդրումային, հարկային, դրամավարկային և այլ ոլորտներում արդյունավետ քաղաքականության իրականացման պայմաններում [2]: Այս տեսանկյունից պետք է նշել պետական հայեցակարգով նախատեսված լեռնահանքային արտադրության ընդլայնման առաջնահերթությունը [3], որը կարելի է իրականացնել թույլ յուրացված, այդ թվում՝ նաև սահմանամերձ գոտիների հարուստ լեռնահանքային հումքի (ոսկու, ոսկի-բազմամետաղային, բազմամետաղային հանքավայրեր) օգտագործմամբ՝ հումքի շահագործման նոր տեխնոլոգիաների կիրառմամբ:

Որպես օրինակ կարելի է բերել Վայոց ձորի մարզի Ամուլսարի ոսկու հանքավայրը, որը գտնվում է տարաբնակեցման համար անբարենպաստ գոտում (2100 մ -ից բարձր տարածքներ): Այդ հանքավայրի շահագործումը նախատեսված է նոր, առաջավոր տեխնոլոգիաների կիրառմամբ (առանց պոչամբարի)՝ մի շարք միջոցառումներով ապահովելով շրջակա միջավայրի պահպանման էկոլոգիական նորմերը: Մոտ ապագայում Վայոց ձորի մարզը կարող է ոսկու արտադրության արդյունաբերական կենտրոն դառնալ Ամուլսարի ոսկու և Ազատեկի ոսկի-բազմամետաղային հանքավայրերի բազայի վրա՝ միաժամանակ ստանձնելով Արարատի ոսկեկորզի ընկերության առաջ ծառայած որոշակի խնդիրներ: Ամուլսարի հանքավայրի շահագործմամբ կյուրացվի տարաբնակեցման համար անբարենպաստ տարածք՝ անտառապատմամբ, ենթակառուցվածքների (ջրագծեր, գազատարներ, ճանապարհներ) կառուցմամբ, համեմատաբար փոքր բարձրությունների վրա (2100...2002 մ) բնակելի թաղամասերի ձևավորմամբ՝ նպաստելով մարզի բնակչության համար նոր աշխատատեղերի

ստեղծմանը, բնակչության արտահոսքի նկատելի նվազմանը, սահմանամերձ բնակավայրերի ամրապնդմանը [4]:

2. Էկոլոգիական հիմնականախքի բարելավման ինժեներական միջոցառումներ: Շրջակա միջավայրի համաէկոլոգիական-քաղաքաշինական բարելավման միջոցառումներում բացի դրանցից խիստ կարևորվում է նաև հողային ծածկույթի և ջրային ավազանների պահպանության ինժեներական կարևորագույն միջոցառումների կանխատեսումը:

Հողային ծածկույթի պահպանություն: Հողային ծածկույթի պահպանման և արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ է մշակել միջոցառումների լայն համալիր, որի շրջանակում գյուղատնտեսական հողերի պահպանման և ռացիոնալ օգտագործման համար հարկ է հիմնականում իրականացնել.

- հակաէրոզիոն միջոցառումներ, որոնք ընդգրկում են ագրոտեխնիկական, կուլտուր-տեխնիկական (նոր հողերի յուրացում, հողերի բերքատվության բարձրացում), անտառմեղիորատիվ (պաշտպանիչ անտառաշերտերի ստեղծում, բնական կերահանդակների բարելավում և յուրացում, հիդրոտեխնիկական ջրահեռացման ջրանցքներ, ձնապաշտպանիչ, հակահեղեղային, հակասողանքային կառույցներ) միջոցառումների շարք,
- աղակալված հողերի յուրացում (Արարատյան հարթավայրի 40 հազ. հա աղակալված հողերի բարելավում և գյուղատնտեսական նպատակներով օգտագործում).
- քիմիական մեղիորացում, ոռոգման վերահսկում, ոռոգման և դրենաժային ցանցի բարելավում, արտեզյան հողերի շահագործման և փորման վերահսկում՝ կրկնակի աղակալումից հողերը պահպանելու համար,
- խախտված հողերի վերականգնում, ինչի համար անհրաժեշտ են ռեկուլտիվացման աշխատանքներ՝ հողերը հիմնականում գյուղատնտեսական նպատակներով օգտագործելու համար: Դժվար ռեկուլտիվացվող տարածքները կարելի է օգտագործել շինարարական (քարհանքեր), ձկնաբուծության (ավազահանքեր) և այլ նպատակներով: «Հայհողշին» ինստիտուտի տվյալներով՝ Արարատյան հարթավայրի աղակալված հողերի, ինչպես նաև նախալեռնային շրջանների (Թալին, Աշտարակ, Նաիրի, Բաղրամյանի տարածաշրջաններ) քարքարոտ հողերի մեղիորացման և խախտված հողերի ռեկուլտիվացման միջոցառումների կիրարկմամբ կարելի է յուրացնել 100 հազ.հա հողատարածք՝ գյուղատնտեսական նպատակներով օգտագործելու համար,
- վտանգավոր արդյունաբերական թափոնների պահեստավորում,
- գոյություն ունեցող թափոնադաշտերի տեխնիկական վիճակի բարելավում,
- կոշտ կենցաղային թափոնները վերամշակող գործարանային հզորությունների ապահովում՝ հաշվի առնելով, որ աղբավայրերի ստեղծման համար տարածքային պակասի պատճառով (կառուցապատված տարածքներ, կառուցապատման սահմանափակումների առկայություն) հաճախ անհնար է դառնում աղբավայրի (պոլիգոնի) սանիտարական գոտու ապահովումը,

- անասնապահական, թռչնաբուժական ֆերմաների սանիտարական գոտիների պահպանում,
- ռոռզման նպատակով օգտագործվող գետերի մաքրության պահպանում.
- ճանապարհային օպտիմալ ցանցի ստեղծում, սանիտարական գոտիների համապատասխանեցում նորմերին,
- արդյունաբերական օբյեկտներում միջազգային ստանդարտներին համապատասխանող տեխնոլոգիաների ներդրում` ջրի շրջապտուտային օգտագործմամբ.
- Էկոլոգիապես անվտանգ գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպում, առաջին հերթին` Սևանի ավազանում:

Բացի վերը շարադրվածից, առկա հիմնախնդիրներով պայմանավորված, հողային ռեսուրսների կառավարման ոլորտում պետք է որպես գերակա դիտարկել հետևյալ խնդիրները.

- մեծ թվով չկառուցապատված տնամերձ հողամասերի առաջնահերթ կառուցապատում,
- օրենսդրության դաշտում հողային ռեսուրսների դասակարգման սկզբունքների վերանայում` տարանջատելով հողերի «նպատակային նշանակություն» և «իրավական ռեժիմ» հասկացությունները, բարելավելով հողային ֆոնդի հաշվառման համակարգը, հողօգտագործումը և քաղաքաշինական գործունեությունը կարգավորող տարածական պլանավորման փաստաթղթերում ներդնելով հողերի գոտիավորման նոր համակարգ,
- սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային տարածաշրջանների համար հողօգտագործման, համայնքային սեփականության հողերի օտարման և արդյունավետ կառավարման առանձնահատուկ սկզբունքների սահմանում և հողերի կոնսոլիդացիայի համար նպաստավոր նորմատիվային դաշտի կազմավորում: Վերջին խնդրի լուծումը չի պահանջում շոշափելի ներդրումներ, սակայն կարող է զգալի դրական արդյունքներ արձանագրել հետևյալ ուղղություններով.

- միավորված հողամասերի նկատմամբ պահանջարկի և իրացվելիության մակարդակների բարձրացում,
- հիպոթեքային շուկայում փոխառու միջոցների մատչելիության մակարդակի բարձրացում,
- ենթակառուցվածքների ռացիոնալ պլանավորում և բարելավում.
- գյուղատնտեսական գործառնություններում ծախսերի կրճատում և աճեցրած բերքի ինքնարժեքի իջեցում,
- նոր աշխատատեղերի ստեղծում,
- աղքատության և արտագաղթի նվազեցում,
- երկարաժամկետ հեռանկարում համայնքների կայուն զարգացում:

Անտառների, բուսական, կենդանական աշխարհի և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության միջոցառումներ: Այս նպատակով անհրաժեշտ է`

- անտառազիտության զարգացում, անտառատնտեսության վարման և զարգացման համար գիտահետազոտական նախագծային աշխատանքների լայն ծրագրի իրականացում`

ուղղորդված հիմնականում անտառների պահպանմանն ու անտառածածկ տարածքների մեծացմանը՝ հատուկ ուշադրություն հատկացնելով պաշտպանիչ նշանակության անտառներին (քաղաքների շրջակայքում, ճանապարհների, գետերի երկայնքով շրջակա միջավայրն աղտոտող արդյունաբերական և գյուղատնտեսական օբյեկտների շուրջ անտառաշերտերի ստեղծում),

- բազային տնկարանային տնտեսությունների վերականգնում և կատարելագործում,
- անտառների սանիտարական վիճակի բարելավում (անտառների պահպանություն տարբեր վնասատուներից և հիվանդություններից՝ հիմնականում անտառների և բուսականության պաշտպանության կենսաբանական միջոցների լայնածավալ կիրառմամբ),
- կազմակերպչական միջոցառումների մշակում, անտառային օրենսգրքի պահանջներից բխող նորմատիվային փաստաթղթերի կազմում, բնագավառի տեխնիկական վերազինում:

Բուսական, կենդանական աշխարհի և բնության հատուկ պահպանվող տարածքների օգտագործման բնագավառում նոր տնտեսական քաղաքականության անցնելու արդյունքում թեև արդյունագործական և սիրողական ձկնորսությունը, որսորդությունը, կենդանիների արտահանումը, օգտակար բույսերի՝ դեղագործական նպատակներով օգտագործումը հիմնականում իրականացվել է թույլատրագրերի և համաձայնագրերի հիման վրա, բայց և այնպես արձանագրվել են նաև բնապահպան օրենսդրության բազմաթիվ խախտումներ: Այս բնագավառում անհրաժեշտ է՝

- բուսական և կենդանական աշխարհի բնականոն վերարտադրությունն ապահովելու համար անտառների, «Սևան», «Դիլիջան» ազգային պարկերի, արգելոցների և արգելավայրերի պահպանության բարելավում, սահմանների հստակեցում,
- գիտահետազոտական ուսումնասիրությունների հիման վրա բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման հեռանկարային ուրվագծերի մշակում՝ սահմանների հստակեցմամբ և արգելոցային տարբեր ռեժիմների սահմանմամբ, առանց որոնց բարդանում են կազմակերպչական աշխատանքները:

Ջրային ավազանի պահպանության միջոցառումներ: ՀՀ ջրային ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման ասպարեզում առաջնահերթ են հետևյալ խնդիրները.

- ՀՀ տարածքի ջրատնտեսական հաշվեկշռի կազմում (տարածական ռացիոնալ վերաբաշխում՝ ջրային կորստի բացառմամբ),
- գետերի և արտեզյան ավազանների սահմաններում առկա բոլոր քաղաքային և գյուղական բնակավայրերի (առաջնահերթ՝ Երևան, Վանաձոր, Գյումրի, Ալավերդի, Կապան և Սևանի ավազանի քաղաքների համար) ջրահեռացման ցանցի, մաքրման կայանների կառուցում և կատարելագործում (մաքրման կայանների և հեռացվող կեղտաջրերի հզորությունների համապատասխանեցում), ինչպես նաև գոյություն ունեցող կեղտաջրերի մաքրման կայանների և համակարգերի վերանորոգում և վերակառուցում,

- արդյունաբերական խոշոր, բազային ճյուղերի օբյեկտներում միջազգային ստանդարտներին համապատասխան առաջավոր տեխնոլոգիաների ներդրում՝ շրջապտուտային ջրամատակարարման համակարգով,
- մակերևութային ջրերի հեռացման համակարգի և մաքրման կայանների կառուցում,
- աղբյուրների, արտեզյան հորերի սանիտարական գոտիների սահմանում և պահպանում,
- գետերի (հատկապես փոքր գետերի) ջրապաշտպան գոտիների սահմանում և պահպանում՝ տնտեսական գործունեության խիստ սահմանափակմամբ,
- Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման համալիր միջոցառումների մշակում,
- ջրային ավազանների աղտոտվածության մոնիտորինգի կազմակերպում:

Օդային ավազանի պահպանության միջոցառումներ: Օդային ավազանն աղտոտող հիմնական աղբյուրն ավտոմոբիլային տրանսպորտի արտանետումներից բացի նաև արդյունաբերությունն է, որի զարգացման համար հանրապետությունն ունի բավականաչափ հզոր հումքային բազա, հիմնականում՝ արդյունաբերության զարգացման կոմպլեքսատեղծ ճյուղերի զարգացման համար (մետաղային օգտակար հանածոներ), ինչը ենթադրում է վերջնական արտադրանքի ստեղծում մաքուր մետաղների և դրանց համաձուլվածքների տեսքով՝ հանքային հումքի բոլոր բաղադրիչներից ստացված թափոնների լրիվ օգտագործմամբ:

Արդյունաբերական օբյեկտների վերականգնման և նորերի կառուցման ժամանակ անհրաժեշտ են բնապահպանական որոշակի միջոցառումներ, այն է.

- հումքի վերամշակման առաջավոր տեխնոլոգիաների կիրառում, փակ տեխնոլոգիական ցիկլի ստեղծում, հումքի համալիր շահագործում՝ սկսած հումքի հանույթից, հարստացումից, մետալուրգիական ցիկլից մինչև արտադրական թափոնների (հանքի ծածկաշերտ, հարստացուցիչ գործարանների թափոններ, արտադրական գազեր, փոշի, խարամներ և այլն) լիարժեք օգտագործում.
- հանքավայրերի շահագործման և հանքանյութերի հարստացման ժամանակ որպես առաջնային միջոցառում՝ թափոնների հուսալի պահեստավորման ապահովում,
- շրջապտուտային ջրի օգտագործում,
- արդյունաբերական ձեռնարկությունների սանիտարապաշտպանիչ գոտիների ստեղծում և վերահսկում,
- մթնոլորտն աղտոտող ամենահզոր աղբյուրի՝ տրանսպորտի միջոցների կատարելագործում (բեռնատար ավտոմեքենաների, ավտոբուսների և այլ փոխադրամիջոցների գազիֆիկացում, շարժիչների կատարելագործում և այլն), տրանսպորտային մայրուղիների սանիտարապաշտպանիչ գոտիների կանաչապատում, քաղաքների շրջանցիկ ճանապարհների նախագծում, քաղաքային փողոցային ցանցի կատարելագործում, տրանսպորտային կապերի և հոսքերի կանոնավորում, հիմնականում՝ ռեկրեացիոն և բնապահպանական գոտիներում,
- շրջակա միջավայրի վրա արդյունաբերական օբյեկտների գործունեության ազդեցության

գնահատման հայեցակարգի մշակում,

- պետական վերահսկողության ուժեղացում, մթնոլորտի աղտոտվածության հաշվառում, մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի նորմավորում և աղտոտվածության պետական մոնիտորինգի ապահովում:

Բնության և պատմամշակութային հուշարձանների պահպանության միջոցառումներ: Հաշվի առնելով բնության և պատմամշակութային հուշարձանների կարևորագույն նշանակությունը՝ ռեկրեացիայի (հանգիստ-բուժում-տուրիզմ) կազմակերպման համար անհրաժեշտ է.

- բնության հուշարձանների պահպանական ռեժիմի կանոնակարգում.
- պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիների վերահսկում.
- բարձրարժեք հուշարձանների վերականգնում.
- պատմական քաղաքերի սոցիալական ակտիվության դերի մեծացում (ռեկրեացիոն ճյուղի, մասնավորապես՝ տուրիզմի զարգացում):

**А.А. Алоян,
Ю.А. Сафарян,
С.А. Товмасын,
Дж.Н. Мурадян**

ПРОБЛЕМЫ ВЗАИМОСВЯЗИ ЭКОЛОГИЧЕСКОГО КАРКАСА И ГРАДОСТРОИТЕЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ ТЕРРИТОРИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Рассмотрены вопросы охраны экологического каркаса РА (лесные массивы, земли лесхоза, особо охраняемые территории, рекреационные территории и объекты), острота которых связана не только с загрязнением окружающей среды, вызванной неуправляемым использованием природных ресурсов (земельных, водных, воздушных, сырьевых), но и с активизацией процесса урбанизации и несбалансированным градостроительно-экономическим использованием территории РА. С этой точки зрения улучшение экологического каркаса должно протекать взаимосвязано с градостроительно-экономическими мероприятиями.

Ключевые слова: экологический каркас, градостроительный каркас, природоохранные мероприятия, урбанизация, хвостохранилище, градостроительно-экономическая освоенность

**A.A. Aloyan,
Yu.A. Safaryan,
S.A. Tovmasyan,
J.N. Muradyan**

THE PROBLEMS OF THE INTERCONNECTION BETWEEN ENVIRONMENTAL FRAMEWORK AND URBAN PLANNING-ECONOMIC DEVELOPMENT OF TERRITORY OF RA

Issues relating to the protection of environmental framework of RA (forests, forestry, specially protected territories, recreational areas and objects) are considered. The severity of the problems are connected not only with environmental pollution and unorganized use of natural resources (land, water, air, raw materials), but also with the processes of urbanization, unbalanced urban planning -economic use of the

territory. Therefore environmental framework should be improved with interrelated urban planning - economic and environmental activities.

Keywords: environmental framework, urban planning framework, environmental activities, urbanization, tailing dump, urban planning - economic development

Գրականություն

1. **Մուրադյան Ջ., Սարգսյան Ս., Պետրոսյան Ն. և ուր.** Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագիծ/ Հայնախագիծ ինստիտուտ. - Երևան, 2002:
2. **Սաֆարյան Յու.** Հայաստանի Հանրապետության թույլ յուրացված տարածաշրջանների քաղաքաշինության կայուն զարգացման ուղիները/ Յու.Սաֆարյան, Ջ.Մուրադյան, Ս.Թովմասյան, Մ.Դավթյան. - Երևան: ԵՃՇՊՀ հրատ., 2011:
3. **Деловой экспресс.** - 2011. - №17:
4. **Алоян П.** Экология требует специальных знаний // Голос Армении. - 7 июня, 2011.

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակներում:

Ալոյան Արտյոմ Ալբերտի, ճ.թ., դոց. (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, ակ. Ալ. Թամանյանի անվ. ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, ա.գ.ա., ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման և վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոն, (077) 074550: **Սաֆարյան Յուրի Աշոտի, ճ.թ., պրոֆ.** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, ԳԱԳ պրոռեկտոր, ակ. Ալ. Թամանյանի անվ. ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, ծրագրի ղեկավար, ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման և վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի վարիչ, (093)714040, science@ysuac.am: **Թովմասյան Սարգիս Արիստակեսի, ճ.թ., դոց.** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ ակ. Ալ. Թամանյանի անվ. ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գ.ա, ճարտարապետության ֆակուլտետի ղեկան, Քաղաքաշինության ամբիոն, (091)427599, tosar@mail.ru: **Մուրադյան Ջուլետտա Նահապետի** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, ակ. Ալ. Թամանյանի անվ. ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գիտաշխատող, (091) 373506:

Алоян Артем Альбертович, канд. архит., доц. (РА, г. Ереван) - НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. академ. Ал. Таманяна, с.н.с., кафедра Теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории, (077) 074550. **Сафарян Юрий Ашотович, д-р архит., проф.** (РА, Ереван) - НУАСА, проректор по НР, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. академ. Ал. Таманяна, рук. прогр, зав. каф. Теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории, (093)714040, science@ysuac.am. **Товмасын Саргис Аристархович, канд. архит., доц.** (РА, г.Ереван) – НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. академ. Ал. Таманяна, н.с., декан факультета Архитектуры, кафедра Градостроительства, (091)427599, tosar@mail.ru. **Мурадян Джулетта Нагапетовна** (РА, Ереван) - НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. академ. Ал. Таманяна, н. с., (091)373506

Aloyan Artyom Albert, doctor of Philosophy (Ph.D) in Architecture, associate prof. (RA, Yerevan) - NUACA, Research Laboratory of Architecture and Construction by Academician Al. Tamanyan, senior researcher, Chair of Theory of Architecture, Restoration and Reconstruction of Historical Heritage, Fine Arts and History, (077) 074550. **Safaryan Yuri Ashot, Doctor of science (architecture), prof.** (RA, Yerevan)- NUACA, vice-rector of SA, Research Laboratory of Architecture and Construction by Academician Al. Tamanyan, Chief of progr., Head of the Chair of Theory of Architecture, Restoration and Reconstruction of Historical Heritage, Fine Arts and History, (093)714040, science@ysuac.am. **Tovmasyan Sargis Aristakes, doctor of of Philosophy (Ph.D) in Architecture, associate prof.** (RA, Yerevan)-NUACA, Research Laboratory of Architecture and Construction by Academician Al. Tamanyan, researcher dean of Architectural faculty, chair of Civil Engineering, (091)427599, tosar@mail.ru. **Muradyan Julietta Nahapet**, (RA, Yerevan)- NUACA, Research Laboratory of Architecture and Construction by Academician Al. Tamanyan, scientific worker, (091)373506.

Ներկայացվել է՝ 02.09.2014թ.

Ընդունվել է տպագրության՝ 10.09. 2014թ.